ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՍՈՎՈՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՏՎԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կատարող՝ Անժելա Բաղալյան

Ղեկավար՝ Գայանե Սիմոնյան

ԵՐԵՎԱՆ 2022

Ներածություն

Աշխարհի մարդիկ բոլորն էլ միատեսակ կենսական կարիքներ ունեն՝ սննդի, կացարանի, առողջության, սիրո, բարեկամության և այլն;Մեր այս և այլ կարիքներ մենք ապահովում ենք ճիշտ կրթություն ստանալու շնորհիվ;Ուսումնական հաստատություններում մեր ստացած գիտելիքներն ու կարողությունները միտված են դեպի արժեքներ որոնք պետք է ձևավորվեն ցանկացած քաղաքացու մոտ; Այստեղ իր դերն ու նշանակությունն ունի հանրակրթական դպրոցը;Սովորողների մոտ արժեհամակարգ ձևավորելու համար դպրոցի օգնությամբ հետևում ենք նրա կրթությանը և դաստիարակությանը;Պետք է նկատի ունենալ,որ արժեքների ձևավորմանը պետք է նպաստեն դպրոցի իուրաքանչյուր ուսումնական առարկա,այդ թվում իր մեծ ներդրումն ունի մաթեմատիկան;Ճիշտ է մաթեմատիկայի ուսումնական նյութը կերպարային մոտեցման հնարավորություններ չի տալիս ,բայց ունի բարոյական արժեքների ձևավորման մեծ ներուժ; Մինչդեռ հաճախ այս հիմնական կարիքները չեն բավարարվում:

Իրավունք

Ամեն հասարակություն հույս ունի, որ իր երեխաները մեծանալով ունակ ու պատասխանատու քաղաքացիներ կդառնան և ի վիճակի կլինեն գործել ի նպաստ և ի բարօրություն այդ հասարակության:

Մինչդեռ երեխան, որը զրկված է իր հիմնական իրավունքներից, չի կարող մեծանալ որպես հոգատար, ուրիշի իրավունքները հարգող, գործուն դիրքորոշում ունեցող անհատ:

Իրավունքների ոտնահարումը, բացի ինչ-որ անհատների տառապանք պատճառելուց, նաև, որն ավելի վտանգավոր է՝ պարարտ հող է ստեղծում սոցիալական և քաղաքական անկայունության համար: Անարդարությունը բախումների և բռնության հիմնական պատճառն է: Իսկ բախումներն ու բռնությունն էլ իրենց հերթին էլ ավելի մեծ անարդարություն են ծնում: Հենց այս պատճառով էլ, գիտակցելով մարդկության առաջընթացի համար արդարության կարևորությունը, հասարակությունը հանգել է երեխաներին արդարության մասին ուսուցանելու անհրաժեշտությանը: Երեխաները պետք է իմանան, թե ինչ է իրավունքը, որոնք են իրենց իրավունքները, որպեսզի կարողանան ապրումակցել նրանց, ում իրավունքները ոտնահարվում են, պատրաստ լինեն պայքարելու թե՛ իրենց, թե՛ ուրիշների իրավունքների համար՝ հանուն արդարության, հանուն այն բանի, որ մարդիկ, անկախ ծագումից, մաշկի գույնից կամ հավատքից, հավասար իրավունքներով օժտված լինեն, որպեսզի յուրաքանչյուրը հնարավորություն ունենա ձևավորվելու, որպես անհատ կայանալու՝ իր ողջ ներուժի չափով:

Սակայն արդարության մասին ուսուցումը միայն օրենքի վերացական հոդվածներին ծանոթանալով չի սահմանափակվում: Այն կարևորում է, որ երեխաները գիտակցեն արդարությանը վերաբերող խնդիրների ներգործությունն իրենց իսկ կյանքին՝ իրենց անմիջական շրջապատին՝ տանը, դպրոցում, համայնքում, որպեսզի գործնականում նվիրվեն տարբեր ոլորտներում և տարբեր մակարդակներով արդարության և հավասարության հասնելու գործին:

Երեխայի հիմնական իրավունքները և դրանց երաշխիքները

Հոդված 5. Երեխայի կյանքի իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի կյանքի իրավունք:

Պետությունը և նրա համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի ապրելու և զարգանալու համար:

Հոդված 6. Երեխայի անվան և քաղաքացիության իրավունքը2

Յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ունի անվան և քաղաքացիության իրավունք:

Հոդված 7. Երեխայի առողջության պահպանման իրավունքը

Հոդված 8. Երեխայի անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունքը

Հոդված 9. Բռնությունից երեխայի պաշտպանության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակ (ֆիզիկական, հոգեկան և այլ) բռնությունից պաշտպանության իրավունք:

Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկվել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի:

Երեխայի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման դեպքում խախտողը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 10. Երեխայի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը:

Արգելվում է առանց ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնության մինչև 16 տարեկան երեխայի մասնակցությունը կրոնական կազմակերպություններին:

Հոդված 12. Ընտանիքում ապրելու երեխայի իրավունքը:

Հոդված 13. Երեխայի իրավունքների պաշտպանությունն ընտանիքում:

Հոդված 16. Երեխայի բնակելի տարածության իրավունքը:

Հոդված 17. Ժառանգություն ստանալու երեխայի իրավունքը:

Յուրաքանչյուր երեխա (ներառյալ որդեգրված) ծնողի մահվան, ինչպես նաև դատարանի վճռով ծնողին մեռած հայտարարելու դեպքում անկախ բնակության վայրից, ունի ժառանգություն ստանալու իրավունք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Հոդված 19. Երեխայի աշխատանքի իրավունքը:

Հոդված 20. Երեխայի հանգստի իրավունքը:

Հոդված 22. Երեխայի պատվի և արժանապատվության պաշտպանության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի պատվի և արժանապատվության պաշտպանության իրավունք:

Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության և հեռախոսային խոսակցության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իր իրավունքներն իրացնելիս չի կարող ենթարկվել կամայական, ապօրինի միջամտության կամ իր պատվի և արժանապատվության նկատմամբ ոտնձգությունների:

Ուսումնադաստիարակչական հաստատություններում երեխայի ուսուցումը և դաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի փոխհարաբերություններն իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա:

Երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 11. Երեխայի կրթության իրավունքը

Կրթությունն ուսուցման միջոցով մի գործընթաց է, որով հասարակությունը գիտակցված կերպով իր կողմից կուտակված գիտելիքները, նվաճումները, հմտությունները և արժեքները մի սերնդից մյուսին փոխանցում է կրթական հաստատությունների միջոցով: Կրթությունը երկրի առաջադիմության, մշակույթի պահպանման, զարգացման անհրաժեշտ պայմանն է: Կրթության նպատակն է անձի և քաղաքացու մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացումը: Կրթական մակարդակը կարևոր է նաև ամեն մի մարդու կյանքում, նրա հասարակական դիրքի և նվաճումների համար: Ելնելով այդ կարևորությունից՝ Սահմանադրությունն ամրագրել է « Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք»:

Սովորողն իրավունք ունի՝

1. Ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.
2. Ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.
3. Անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից.
4. Մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների.
5. Պաշտպանվծ լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների և սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին և արժանապատվությանը.
6. Ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.
7. Ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.
8. Ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.
9. Օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված իրավունքներից:

Ազատություն

Ազատությունը բխում է մարդու բնական կարիքներից, որոնք բազմաբնույթ են ;

Ազատությունը ցույց է տալիս անձին թույլատրվող այն հնարավոր սահմանը, որի շրջանակներում անձն ինքն է որոշում իր վարքագծի ձևն ու տեսակը: Ըստ միջազգային օրենքների՝ սահմանվում են անձի 7 ազատություններ: Դրանք են՝

1. **Ազատություն՝** սեռական, ռասսայական, ազգային, կրոնական խտրականության ենթարկվելու վտանգից,
2. **Ազատություն՝** կարիքավորությունից և չքավորությունից,
3. **Ազատություն՝** անձի սեփական ներուժը զարգացնելու և իրացնելու,
4. **Ազատություն՝** սպառնալիքների, խոշտանգումների, կամայական ձերբակալությունների, բռնի գործողությունների ենթարկվելու վախից,
5. **Ազատություն՝** անարդարությունից և օրինախախտումներից,
6. **Ազատություն՝** մտքի, խղճի, դավանանքի և խոսքի,
7. **Ազատություն՝** արժանապատիվ աշխատանք ունենալու:

Այսպիսի դասակարգումը կարելի է օգտագործել ազատության մասին ունեցած պատկերացումներն ամբողջացնելու և ազատության երկու ըմբռնումները բացատրելու համար, ինչպես նաև **«ազատություն ինչ-որ բանից»** և **«ազատություն հանուն ինչ-որ բանի»** ընկալումները տարբերակելու համար:

Սովորողների արժեքային համակարգի, արժեքային կողմնորոշման կարևոր տարրերից մեկը ազատության արժեքն է: Այս արժեքի ձևավորումից է մեծապես կախված մարդու ինքնադրսևորման, ինքնորոշման, ազատ ու ինքնակամ ապրելու, իր ունակությունները լիարժեք բացահայտելու կարողականությունը:

Ազատությունը սերտորեն կապված է անկախության, պատասխանատվության և բարոյական այլ արժեքների հետ, ինչը ավելի է կարևորում նրա ձևավորման անհրաժեշտությունը:

Մեծ է դաստիարակության դերը ազատության արժեքի ձևավորման խնդրում: Այստեղ իր ուրույն դերն ունի նաև մաթեմատիկական կրթությունը: Հարկ է նշել, որ մաթեմատիկայի կրթական ներուժը առավել խորն է դրսևորվում հատկապես ինտելեկտուալ ազատության ձևավորման գործում:

Մեր տարբեր կարիքները բավարարելու համար մեզ անհրաժեշտ են սնունդ, հագուստ, տեղափոխման և այլ միջոցներ: Եթե մենք այդ գործողությունների արդյունքում հասնում ենք հաջողության՝ ձեռք ենք բերում նաև ազատություն՝ ազատ ենք այդ կարիքներից, անհրաժեշտություններից: Մեկը ունի հանգստի անհրաժեշտություն, բայց չի կարող այն իրականացնել, այսինքն՝ չունի համապատասխան ազատություն: Հանրակրթական դպրոցի շրջանավարտը ունի բարձրագույն կրթություն ստանալու անհրաժեշտություն և ունի նաև այդ անհրաժեշտությունը իրականացնելու ազատություն: Իրավական դաշտում ազատություն է բանտարկված չլինելու անհրաժեշտությունը. չբանտարկված մարդը ունի նման ազատություն, իսկ բանտարկյալը՝ ոչ: Քաղաքական դաշտում ազատություն է ընտրելու, ընտրվելու, խոսքի, խղճի, տպագրվելու անհրաժեշտությունը: Որոշ երկրներում մարդիկ նման ազատություններ ունեն, իսկ այլ երկրներում՝ չունեն:

Բացարձակ ազատություն գոյություն չունի. այն կարող է սահմանափակվել զանազան գործոններով: Թևավոր ասացվածք կա՝ իմ բռունցքի ազատությունը սահմանափակվում է ուրիշի քթի ծայրով: Այսինքն՝ մի մարդու ազատությունը սահմանափակվում է մյուսի ազատությամբ: Ազատության սահմանափակման պատճառ կարող են դառնալ ժամանակն ու տարածությունը, մարդու նյութական պայմանները, ընկերային վիճակը, վախը, հասարկության մեջ գոյություն ունեցող բարքերը, սովորույթները, եկեղեցին, պետությունը: Նման սահմանափակումների առկայությունը ազատությանը բնորոշ հատկանիշ է:

Ինչքանո՞վ է նպաստում մաթեմատիկայի դասավանդման գործընթացը ազատության արժեքի ձևավորմանը:

« Իրական կյանքում ազատությունը հանդես է գալիս որպես անհրաժեշտություն՝ ազատության ընտրության անընդհատ շղթայի տեսքով, ինչը իրականացվել է նախորդ սերունդների կողմից և հասարակությունը հասցրել ներկա վիճակին»: Սա նշանակում է, որ իր անհրաժեշտությունների իրականացման համար մարդը ձգտում է ազատության, ինչի իրականացմանը մեծապես նպաստում է գիտատեխնիկական, մշակութային առաջընթացը: Եվ գիտության ու տեխնիկայի յուրաքանչյուր նշանակալից առաջընթաց նպաստում է մարդու ազատության սահմանափակումների նվազեցմանը, ազատության սահմանների ընդլայնմանը: Օրինակ, մարդը չունի թռչելու անհրաժեշտությունը իրականացնելու հնարավորություն: Նման ազատություն ստանալու համար ստեղծվեց աերոդինամիկան, և աերոդինամիկայի նվաճումները մարդուն թույլ տվեցին ստանալ թռչելու՝ օդով տեղափոխվելու ազատություն: Հանրահայտ է, որ առանց մաթեմատիկական հաշվարկների անհնար կլիներ իրականացնել աերոդինամիկայի նշված և այլ հաջողություններ:

Հեռուստատեսությունը, ինտերնետը և ժամանակակից տեխնիկայի այլ նվաճումներ, որոնք իրականացնում են մարդու տեղեկատվական, հեռահաղորդակցության և կարևորագույն այլ ազատություններ, հիմնված են մաթեմատիկայի վրա: Ընդհանրապես, դարեր շարունակ մաթեմատիկան եղել է գիտական առաջընթացի առաջատարը, իսկ տեխնիկան բոլոր լուրջ նվաճումները հենվել են մաթեմատիկական հաշվարկների վրա: Այդ պատճառով մաթեմատիկան նպաստել է մարդու համապատասխան ազատությունների սահմանափակումների վերացմանը կամ դրանց սահմանների ընդլայնմանը:

Մաթեմատիկայի իմացությունը նպաստում է այլընտրանքի և ընտրության ազատության ընդլայնմանը: Իսկապես, մաթեմատիկայի լավ իմացության դեպքում պատանին, երիտասարդը ավելի լայն հնարավորություն կունենան ավելի մեծ ազատություն կստանա կատարելու, օրինակ, ապագա մասնագիտության և այն ստանալու համար անհրաժեշտ համալսարանի ընտրությունը: Ավելորդ չէ նաև նշել հավանականությունների տեսության դերը տարբեր իրադրություններում հավանականությունների թվի, նպաստավոր ելքերի և այլ հաշվարկների իրականացման մեջ: Դրանց իմացությունը մեծապես կարող է նպաստել անհրաժեշտության իրականացման հնարավոր տարբերակների հաշվման, դրանց համեմատման և նպաստավոր ելքերի միջև ճիշտ ընտրության իրագործմանը: Հավանականությունների տեսության տարրերի նման իմացություն սովորողին կարող է տալ մաթեմատիկայի դասավանդման գործընթացը՝ միջին և ավագ դպրոցներում նախատեսվող իր ծրագրային հնարավորություններով:

Հանրահայտ է, որ գիտակից մարդը դժվարությամբ է ենթարկվում զանազան, այդ թվում՝ ազատությունը սահմանափակող հարկադրանքների: Նման հարկադրանքներ կարող են իրականացվել ուսումնական, աշխատանքային և այլ պարտականությունների թերացման դեպքերում: Իսկ մաթեմատիկայի իմացությունը մեծացնում է ուսումնական, աշխատանքային և այլ գործառույթների իրականացման կարողականությունը, ինչը հնարավորություն է տալիս որակով կատրել համապատասխան պարտականությունները և զերծ մնալ նմանատիպ թերացումներից և հարկադրանքներից:

Մաթեմատիկայի դասավանդման գործընթացը նպաստում է նաև սովորողների կամային որակների զարգացմանը, ինչը մեծացնում է հարկադրանքի չենթարկվելու և սեփական կամքը ազատորեն դրսևորելու նրանց հնարավորությունները:

Կրթությունը և, հատկապես, մաթեմատիկայի դասավանդման գործընթացը մեծացնում են տնտեսական, մասնագիտական, քաղաքական, իրավական և այլ ոլորտներում անկախություն ձեռք բերելու մարդու հնարավորությունները:

Ժամանակակից կյանքում մարդու քաղաքական, իրավական, մանսագիտական, ընկերային ազատությունները մեծապես պայմանավորված են նրա նյութական, տնտեսական անկախությամբ: Իսկապես, նյութական վատ պայմանները, տնտեսական կախվածությունը մարդուն թույլ չեն տալիս իրականացնել ընտրելու իր ազատ կամքը՝ իր քաղաքական ազատությունը, և նա որոշ դրամական փոխհատուցման դիմաց ծախում է իր ընտրական ձայնը՝ հրաժարվում է սեփական կամարտահայտությունից: Մաթեմատիկայի իմացությունը հնարավորություն կարող է տալ հաղթահարել այդ դժվարությունները, ունենալ լավ վարձատրվող աշխատանք՝ ստանալ տնտեսական անկախություն և չկառչվելով՝ ապահովել իր քաղաքական ազատության իրականացումը:

Պատիվ

Պատիվը արտաքին խիղճն է, իսկ խիղճը՝ ներքին պատիվը:

Ա,Շոպենհաուեր

Պատիվը բարոյական այն արժեքն է, որը հասարակության կողմից դիտվում է որպես մարդու արժանիք, արժանիքի չափ:

Չնայած պատիվը ավելի շատ հասուն մարդու արժանիք է, սակայն նրա ձևավորման հիմքերը դրվում են վաղ շրջանում, և մարդուն պատիվ բերող գործունեությունները, որ հիմնականում պայմանավորված են նրա հասարակական, ընկերային, մասնագիտական դիրքով և գործունեությամբ, շատ բանով կախված են նրա ստացած

կրթությունից: Այստեղ իրականացվող գործընթացները սկսվում են հանրակրթությունից, որի շրջանակներում մեծ է նաև մաթեմատիկական կրթության դերը:

Պատմականորեն պատիվը համարվել է ընկերային կոնկրետ խմբի բացառիկ արժանիք: Եղել է, օրինակ, ասպետի պատիվը, ազնվականի պատիվը և այլն: Ներկայումս պատիվը դիտվում է որպես մարդու ծառայությունների հասարակական ճանաչում: Այն մեծ մասամբ պայմանավորված է մարդու մասնագիտական կամ հասարակության համար արժեք ներկայացնող այլ գործունեությամբ: Այդ պատճառով մարդու պատիվը կապված է առաջին հերթին նրա մասնագիտական գործունեության հետ:

Սովորաբար պատվաբեր են համարվում հասարակության համարավելի մեծ արժեք ներկայացնող մասնագիտությունները: Բժշկի մասնագիտությունը կարծեք թե արժեքավոր է եղել բոլոր ժամանակներում: Այդ պատճառով բժիշկը մեծ պատիվ է ունեցել և ունի հասարակության մեջ:

Յուրաքանչյուր մասնագիտություն հասարակությունը կարևորում է իր ընդունած կամ կարևորած արժեքներից ելնելով: Այսօր մեզանում ավելի շատ գնահատվում և պատվաբեր են համարվում բանկային համակարգերի, կառվարման և այլ բնագավառների հետ առնչվող մասնագիտությունները, որոնք ապահովում են կայուն ու բարձր աշխատավարձ: Դա բխում է նյութական կամ տնտեսական արժեքի նկատմամբ հասարակության ավելի մեծ ուշադրությունից:

Բացի մասնագիտության շնորհիվ ստացված պատվից, մարդը, կոնկրետ մասնագետը հավելյալ՝ ավելի մեծ պատվի է արժանանում տվյալ մասնագիտության մեջ ունեցած հաջողությունների համար: Բարձր կարող է լինել ոչ միայն բժշկի կամ ուսուցչի պատիվը. Հասարակության կողմից լրացուցիչ պատվի ու գնահատանքի է արժանանում լավ բժիշկն ու լավ ուսուցիչը, լավ արհեստավորն ու լավ մարզիկը, լավ դերասանն ու լավ նկարիչը: Հաճախ որևէ անհատ շատ մեծ ծառայություններ է ունենում իր մասնագիտության մեջ և համընդհանուր ճանաչում է ձեռք բերում: Երբեմն նրա միջոցով ճանաչում են անգամ նրա քաղաքը, երկիրը, ազգը: Նման մարդիկ հասարակության մեջ մեծ պատվի են արժանանում և իրենք նույնպես դառնում են ազգային արժեք: Հայ իրականության մեջ այդպիսիք են եղել Տիգրան Մեծը, Մեսրոպ Մաշտոցը, Գրիգոր Նարեկացին, Հովհաննես Այվազովսկին, Հովհաննես Թումանյանը, Կոմիտասը, Արշիլ Գորկին, Արամ Խաչատրյանը, Վիկտոր Համբարձումյանը և այլ երևելիներ:

Հաճախ պատիվը պայմանավորվում է մարդու հասարակական դիրքով, նրա պաշտոնով. Ինչքան բարձր են մարդու հասարակական դիրքն ու պաշտոնը, այնքան մեծ է հասարակության կողմից նրան տրվող պատիվը: Նման մոտեցումը պարունակում է որոշ կեղծ երանգներ, ինչն արտահայտվում է ավելի բարձր

պաշտոնյայի ինքնագոհությամբ և նրա հանդեպ իր ենթակայի քծնանքով: Ինքնագոհություն և քծնանք՝ ահա բարոյական արատներ, որոնք ըստ Ֆ. Բեկոնի, հստակորեն ու անսխալ ցույց են տալիս, որ իրենց տեղում չեն և՛ պաշտոնյան, և՛ նրա ենթական: Կապված ինքնագոհության հետ, արժե հիշել Տոլստոյի հանրահայտ միտքը՝ մարդու արժանիքները կազմում են մի կոտորակ, որի հայտարարը իր կարծիքն է իր մասին, իսկ համարիչը՝ ուրիշների կարծիքը իր մասին:

Մաթեմատիկական կրթությունը և պատիվը

Ինչպես արդեն նշվել է, մաթեմատիկական կրթությունը կարևոր դեր ունի մտածողության, երևակայության, հիշողության, ուշադրության, կամքի և հոգեկան այլ արժեքների ձևավորման և զարգացման գործում: Իսկ այդ արժեքները նպաստում են յուրաքանչյուր մասնագիտության մեջ լավագույնս խորանալու, այն տիրապետելու գործընթացներին և, հետևապես, արժանանալու ավելի մեծ պատվի:

Նույն նպատակին են ծառայում նաև մաթեմատիկական կրթության կիրառական հսկայական հնարավորությունները. Բավական է նշել, որ ժամանակակից շատ մասնագիտություններ օգտագործում են ոչ միայն մաթեմատիկական գիտելիքներ, այլև մեթոդներ:

Այնուհետև, մաթեմատիկական կրթությունը մարդուն տալով վերը նշված հոգեկան արժեքները, ինչպես նաև բարոյական, ճշմարտային, գեղագիտական արժեքների իմացության հնարավորություններ, նրան կարող է դարձնել խելոք, հավասարակշռված, ողջամիտ անհատականություն և, այդպիսով, արժանացնել հասարակության առանձնահատուկ պատվին:

Հարկ է նշել նաև, որ մաթեմատիկական ունակությունները մեծ մասամբ պայմանավորում են ապագա մասնագիտական ընտրությունը, և այդ պատճառով մաթեմատիկայի ուսուցման ուղղությամբ ունեցած հաջողությունները առանձինահատուկ պատվի են արժանացնում աշակերտին:

Ինչ վերաբերում է ինքնագոհությանը և քծնանքին, ապա դասավանդման գործընթացում առաջինը կարող է դրսևորվել ուսուցչի, իսկ երկրորդը՝ աշակերտի կողմից:

Քծնանքի առկայությունը բարոյական անառողջ հարաբերությունների անսխալ վկայություն է, որ առանձնապես վտանգավոր է կրթական գործընթացում. Ուսուցիչը պետք է բացառի իր հանդեպ աշակերտի նման վերաբերմունքի ցանկացած դրսևորում:

Մյուս կողմից, ուսուցչի աշխատանքը այնքան դժվար է ու այնքան բարդ, որ տեղ չի կարող թողնել ինքնագոհության. իր աշակերտի մեծ կամ փոքր յուրաքանչյուր հաջողություն, որ նման դրսևորման առիթ կարող է ստեղծել ուսուցչի համար, նոր

աշխատանքի, նոր հաջողությունների, նոր բարձունքների ու նոր նվաճումների սկիզբ կարող է լինել միայն, որ ուսուցչից պահանջում է լրացուցիչ ջանքեր, մանկավարժական նոր մոտեցումներ, նոր սխրանքներ: Ասվածը առավել տիպական է մաթեմատիկայի դասավանդումն իրականացնող ուսուցչի պարագայում, քանի որ մաթեմատիկական նյութը աչքի է ընկնում իր հագեցվածությամբ, խորությամբ, ընկալման դժվարությամբ:

Իմաստություններ պատվի մասին

Օբյեկտիվորեն պատիվը ուրիշների կարծիքն է մեր արժանքիների մասին, սուբյեկտիվորեն՝ մեր վախը այդ կարծիքի հանդեպ (Շոպենհաուեր):

Ով պատրաստ չէ մեռնել սեփական պատվի համար, նա անպատվության կարժանանա (Պասկալ):

Պատվից մի խոսիր, եթե ուտելու բան չունես (Ժողովրդական ասացվածք):

Պատիվը կյանքից թանկ է (Շիլլեր):

Ուրիշին պատվազարկելը նաև սեփական պատվազրկությունն է (Պուբլիոս Սիրոս):

Չի կարելի պատվազրկել նրան, ով մահից չի սարսափում (Ժան Ժակ Ռուսո):

Եզրակացություն

Մաթեմատիկական կրթությունը մաթեմատիկայի դասվանդման միջոցով իրականացվող կրթական գործընթացը միայն մաթեմատիկայի ուսուցում չէ;Այն ոչ միայն մաթեմատիկական գիտելիքների ու կարողությունների այլև արժեհամակարգի ձևավորման գործընթաց է; Մաթեմատկական շատ նյութեր կարևոր չեն ապագա քաղաքացու համար , բայց այդ նյութերը սովորողների մոտ ձևավորում ու զաւգացնում են հոգեկան, ճշմարտային,բարոյական,գեղագիտական, ազգային և այլ արժեքներ,որոնք պայմանավորում են ապագա քաղաքացու արժեքային աշխարհը, պաշտպանում նրա իրավունքները,ազատությունը, պատյվն ու արժանապատվությունը;

Օգտագործված գրականություն

Հ,Ս,Միքայելյան- <<Բարոյական արժեքները և մաթեմատիկայի կրթական ներուժը >>

Ուս, ձեռնարկ-<<Ժոռովրդականության հիմնարար արժեքները>>

Ուս, ձեռնարկ Հասարակագիտություն-8

Դասղեկի ձեռնարկ-<<Հանդուրժողականության ուսուցում>>